17785

324(47)
Ж-94

1934

324(47)
Կ-94

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

15 JAN 2010

Վ Ս Խ Հ

# ՀՐԱՀԱՆԳ

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԳԿ ԿԱԶՄԲԱԺՆԻ

ԹԻՖԼԻՍ ∞ 1934

ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Публ. Библиотека
ՀԱՅԿ. ՍՍՀ

1 5 .05. 2014

17785

Տեխ. խմբագիր Ա. ԿՎԵԼԱՁԵ
Սրբագրիչ՝ Ս. ԴՈՎԼԱԹՅԱՆ

Հանձնված է արտադրության 14/X
Ստորագրված է տպագրության 20/X
2 տպ մամուլ
Գլավլիտի լիազոր—A—4086
Տիրաժ 3000
Պատվեր № 2816

# Инструкция

## О ВЫБОРАХ В СОВЕТЫ И НА С'ЕЗДЫ СОВЕТОВ

Издание оргтодела
ЦИК ССР Грузии

Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան Կարմրադրոշ տպարան «Զարյա Վոստոկա»

3241471
ի-94

2 6 SEP 2006

# ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

| | ՏՊՎԱԾ Է | ՊԵՏՔ Է ԼԻՆԻ |
|---|---|---|
| 1) 21-րդ էջ, վերևից՝ 16 տողում (41 հոդվածում) . . . . | 2 որվա | 3 որվա |
| 2) 21-րդ էջ, վերևից՝ 22 տողում (41 հոդվածում) . . . . | 2 որվա | 3 որվա |
| 3) 21-րդ էջ, ներքևից՝ 14 տողում (41 հոդվածի ծանոթությունը) . . . . . . . . | 2 որվա | 3 որվա |
| 4) 21-րդ էջ, ներքևից՝ 10 տողում (42 հոդված) . . . . . | 2 որվա | 3 որվա |
| 5) 22-րդ էջ, վերևից 16 տողում (43 հոդվածի ծանոթության մեջ) . . . . . . . | 2 որվա | 3 որվա |

6) 26-րդ էջ, վերևից՝ 27—31 տողում (46 հոդ. «ա» կետում).

ՏՊՎԱԾ Է

ա) Քաղաքային խորհուրդներ ընտրելիս ընտրվում է՝ Թիֆլիսում 300 ընտրողից մեկ պատգամավոր, Քութայիսում և Բաթումում 200 ընտրողից մեկ պատգամավոր, Գուրջաանի 40 ընտրողից մեկ պատգամավոր, իսկ մնացած քաղաքներում՝ 100 ընտրողից մեկ պատգամավոր:

ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

ա) Քաղաքային խորհուրդներ ընտրելիս՝ Թիֆլիսում ընտրվում է մի պատգամավոր՝ 350 ընտրողներից, Քութայիսում և Բաթումում մեկ պատգամավոր՝ 150 ընտրողից, Սուխումում մեկ պատգամավոր՝ 75 ընտրողից, Փոթիում, Խաշուրիում,

4008
37144

568

(Ստալինիսի) և Սամտրեդիում՝ մեկ պատգամավոր 60 ընտրողից, Ախալցխայում, Գորում, Բորժոմում, Ճիաթուրայում և Թելավում՝ մեկ պատգամավոր 50 ընտրողից, իսկ մնացած քաղաքներում—մեկ պատգամավոր 40 ընտրողից:

| | ՏՊՎԱԾ Է | ՊԵՏՔ Է ԼԻՆԻ |
|---|---|---|
| 7) 29-րդ էջ, վերևից 4-րդ տող (81 հոդված) . . . . . | *հինգ որվա* | յոթ որվա |
| 8) 29-րդ էջ, վերևից՝ 6 տող (82 հոդված) . . . . . . . | *2 որվա* | 3 որվա |
| 9) 29-րդ էջ, վերևից՝ 9 տող (82 հոդված) . . . . . . . | *5 որվա* | 7 որվա |

10) 30-րդ էջ, *վերևից*՝ 12 տող (90 հոդ.)

ՏՊՎԱԾ Է

*90. Քաղաքին կցված վայրերի գյուղական խորհուրդները և այլն...*

ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

90. Քաղաքներին կցված վայրերի գյուղխորհուրդները իրենց պլենումներում ընտրում են պատգամավոր համապատասխան քաղաքի խորհրդի համար, գյուղխորհրդի ամեն մի 20 անդամից մի պատգամավորի հաշվով:

Այն դեպքում, երբ գյուղխորհրդի անդամների թիվը 20-ից պակաս է գյուղխորհուրդը ընտրում է մեկ պատգամավոր:

| | ՏՊՎԱԾ Է | ՊԵՏՔ Է ԼԻՆԻ |
|---|---|---|
| 11) 30-րդ էջ, ներքևից՝ 10 տող (91 հոդված) . . . . | *120 ընտրողից* | 60 ընտրողից |

---

# ՀԱՄԱՎՐԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

# ՎՈՐՈՇՈՒՄԸ

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՀԱՆԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

*Համաձայն Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի և ի զարգացումն ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության խորհուրդների համագումարի ընտրությունների առթիվ հաստատված հրահանգի* (*ԽՍՀՄ Որ. Ժ.* 1930 *Թ.* № 50 *հոդ.* 524, «*ԻԶՎԵՍՏԻԱ*» 1934 *Թ. սեպտ.* 30, № 230), *Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն վորոշում է՝*

1. *Հաստատել և Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ամբողջ տերրիտորիայի սահմաններում գործադրել խորհուրդների ընտրության և խորհուրդների համագումարների հրավիրման հրահանգը:*

2. *Վերացնել Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից* 1930 *Թ. նոյեմբերի* 9-*ին հաստատված բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորներին խորհուրդներում ընտրելու հրահանգը* (*ՎՍԽՀ Որ. Ժ.* 1930 *Թ.* № 21, *հոդ.* 317, 1933 *Թ. հ.* 16, հոդ. 207):

3. *Վերացնել Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հետևյալ վորոշումները՝* 1) 1927 *Թ. հունվարի* 11-*ի՝ Թիֆլիսի համար խորհուրդների ընտրությունների ընդհանուր կանոններից վորոշ բացառություններ սահմանելու մասին,* (*ՎՍԽՀ Որ. Ժ.* 1927 *Թ.* № 1, *հոդ.* 1.). 2) 1927 *Թ. հունվարի* 25-*ի՝ Թիֆլիսի համար ընտրական նորմաներ սահմանելու մասին* (*ՎՍԽՀ Որ. Ժ.* 1927 *Թ.* № 1, *հոդ.* 8). 3) 1930 *Թ. նոյեմբերի* 24-*ի՝ գյուղական վայրերում գտնվող ձեռնարկների, քաղաքներին կցված գյուղերի և Աջարիստանի Ավտոնոմ ՍԽՀ գյուղերի համար նորմաներ սահմանելու մասին* (*ՎՍԽՀ Որ. Ժ.* 1930 *Թ.* № 24, *հոդ.* 249) *և* 4) 1931 *Թ. հունվարի* 7-*ի՝ Սամտրեդիի քաղաքային խորհրդի համար ներկայացուցչության նորմաների մասին* (*ՎՍԽՀ Որ. Ժ.* 1931 *Թ.* № 3, *հոդ.* 25):

Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահ՝ Ֆ. ՄԱԽԱՐԱՁԵ

Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղար՝ ԺՂԵՆՏԻ

*Թիֆլիս 5/X 34 Թ.*

# ՀՐԱՀԱՆԳ

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ԳԼՈՒԽ 1.

### ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

1. Խորհուրդների և խորհուրդների համագումարների ընտրություններն անցկացնելու և ընտրական կամպանիան ղեկավարելու համար համապատասխան տերրիտորիայի սահմաններում կազմվում են հետևյալ ընտրական հանձնաժողովները.

ա) Կենտրոնական ընտրական հանձնաժողով.

բ) Ընտրական հանձնաժողով՝ Աբխազիայի ավտոնոմ ԽՍՀ, Աջարիստանի Ավտոնոմ ԽՍՀ և Հարավ-Ոսեթիայի Ավտոնոմ Մարզի.

գ) Շրջանային ընտրական հանձնաժողովներ.

դ) Քաղաքային ընտրական հանձնաժողովներ.

ե) Գյուղական ընտրական հանձնաժողովներ:

Բացի այդ Թիֆլիսում կազմվում են քաղաքային և շրջանային ընտրական հանձնաժողովներ:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմում է Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը, 23 անդամից բաղկացած, ամբողջ հանրապետության մեջ ընտրությունների կամպանիան ղեկավարելու, նախապատրաստելու և անցկացնելու համար:

3. Աբխազիայի Ավտոնոմ ԽՍ Հանրապետության, Աջարիստանի Ավտոնոմ ԽՍ Հանրապետության և Հարավ-Ոսեթիայի Ավտոնոմ Մարզի ընտրական հանձնաժողովները կազմվում են հիշյալ հանրապետությունների և մարզի Կենտրոնական Գործադիր Կոմիտեների նախագահությունների կողմից հետևյալ կազմով՝ նախագահ, համապատասխան հանրապետության և մարզի կենտգործկոմից 2-ական ներկայացուցիչ, մեկական ներկայացուցիչ արհմիություններից, ՀԼԿՅԵՄ-ից, տեղական քաղաքային խորհրդից, քաղբաժիններից, ազգային փոքրամասնություններից, Կարմիր բանակից և նավատորմից, բանվորներից, բանվորուհիներից, վորոնք անմիջականորեն կապված են արտադրության հետ կոլտնտեսականներից և հասարակական կազմակերպություններից (կոոպերացիա, ՊԱՁԸ-Ավիաքիմ և այլն):

Վերոհիշյալ ընտրական հանձնաժողովների անդամներին և նախագահներին հաստատում են համապատասխան հանրապետության կամ Մարզի Կենտգործկոմի նախագահությունները. և ներկայացնում ի հաստատություն Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության:

4. Շրջանային ընտրական հանձնաժողովները կազմում են շրջանային գործադիր կոմիտեները հետևյալ կազմով՝ նախագահ յերկու ներկայացուցիչ շրջանային գործադիր կոմիտեյից, մեկական ներկայացուցիչ քաղաքային կամ գյուղական խորհուրդներից, վորոնք հանդիսանում են շրջանի կենտրոն, արհմիություններից, ՀԼԿՅԵՄ-ից, քաղբաժիններից, վորոնք գտնվում են շրջանի տերրիտորիայի սահմաններում, ազգային փոքրամասնություններից, բանվորներից և բանվորուհիներից, վորոնք անմիջականորեն կապված են արտադրության հետ, կոլտնտեսականներից, հասարակական կազմակերպություններից (կոոպերացիա, ՊԱՁԸ-Ավիաքիմ և այլն), նույնպես և Կարմիր Բանակից և նավատորմից (նրանց զորամասերի բնակավայրերում):

5. Համապատասխան քաղխորհուրդների վորոշման, քաղաքային ընտրական հանձնաժողովներ կազմվում են՝ Թիֆլիսում, Բաթումում, Սուխումում, Ստալինիրում, Քութայիսում, Փոթիում, Թելավում, Գուրջաանիում, Գորում, Խաշուրում (Ստալինիսի), Բորժոմում, Ախալցխայում, Ճիաթուրում, Զեստաֆոնում, Սամտրեդիում, Խոնիում, Սենակիում, Զուգդիդիում և Մախարաձեյում:

Քաղաքային ընտրական հանձնաժողովների մեջ մտնում են՝ նախագահ, յերկուական ներկայացուցիչ համապատասխան խորհրդից և մեկական ներկայացուցիչ՝ արհմիություններից, ՀԼԿՅԵՄ-ից, ազգային փոքրամասնություններից, բանվորներից և բանվորուհիներից, վորոնք անմիջականորեն կապված են արտադրության հետ. հասարակական կազմակերպություններից (կոոպերացիա, ՊԱՁԸ-Ավիաքիմ և այլն), ինչպես և Կարմիր Բանակից և նավատորմից (նրանց զորամասերի բնակավայրերում):

Թիֆլիսում, Քութայիսում և Փոթիում քաղաքային ընտրական հանձնաժողովների կազմի մեջ, բացի վերոհիշյալ կազմակերպություններից, մտնում են նաև քաղաքային խորհուրդներին կցած գյուղական խորհուրդների և կոլտնտեսականների ներկայացուցիչները:

6. Թիֆլիսի շրջանային խորհուրդներին կից կազմվում են քաղաքային, շրջանային ընտրական հանձնաժողովներ:

Քաղաքային, շրջանային ընտրական հանձնաժողովների կազմի մեջ մտնում են՝ նախագահը, յերկուական ներկայացուցիչ համապատասխան շրջանային խորհրդից, մեկական ներկայացուցիչ արհմիություններից, ՀԼԿՅԵՄ–ից, քաղբաժիններից. ազգային փոքրամասնություններից, Կարմիր Բանակից, բանվորներից և հասարակական կազմակերպություններից (կոոպերացիա, ՊԱՋԸ–Ավիաքիմ և այլն):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Թիֆլիսի, Բաթումի, Քութայիսի, Սուխումի և արդյունաբերական կենտրոնների քաղաքային և շրջանային Կենտրոնական Հանձնաժողովները կարող են կազմել ձեռնարկներում օժանդակիչ հանձնաժողովներ, վորոնք ըստ համապատասխան հանձնաժողովների ցուցումների կարող են անցկացնել կազմակերպչական միջոցառումներ, վորոնք կապված են ընտրությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքների հետ:

7. Շրջանային ընտրական հանձնաժողովների անդամները հաստատվում են համապատասխան շրջանային գործադիր կոմիտեյի կողմից, իսկ նախագահներ նշանակվում են՝ Ավտոնոմ Հանրապետություններում և մարզում, Աբխազիայի ԽՍ Ավտոնոմ Հանրապետության, Աջարիստանի ԽՍ Ավտոնոմ Հանրապետության և Հարավ–Ոսեթիայի ավտոնոմ մարզի կենտրոնական գործադիր կոմիտեյի կողմից ըստ համապատասխան հանրապետական և մարզային ընտրական հանձնաժողովի ներկայացման, Վրաստանի ԽՍ Հանրապետության մյուս շրջաններում—Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության կողմից՝ ըստ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացման,

8. Թիֆլիսի, Քութայիսի և Փոթիի քաղաքային ընտրական հանձնաժողովների անդամները հաստատվում են համապատասխան քաղխորհրդի կողմից, իսկ նախագահներ նշանակվում են Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության կողմից ըստ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացման:

Բաթումի և Սուխումի քաղաքային ընտրական հանձնաժողովների անդամները հաստատվում են համապատասխան քաղաքային խորհրդի կողմից, իսկ նախագահներ նշանակվում են Աբխազիայի Ավտոնոմ ԽՍ Հանրապետության և Աջարիստանի Ավտոնոմ ԽՍ Հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից ըստ համապատասխան հանրապետության ընտրական հանձնաժողովի ներկայացման:



9. Ստալինիրի, Թելավի, Գուրջաանի, Գորիի, Խաշուրի (Ստալինիսի), Բորժոմի, Ախալցխայի, Ճիաթուրի, Չեստաֆոնի, Սամտրեդիի, Խոնիի, Սենակիի, Զուգդիդիի և Մախարաձեյի քաղաքային ընտրական հանձնաժողովների անդամները հաստատվում են համապատասխան քաղաքային խորհրդի կողմից, իսկ նախագահները նշանակվում են համապատասխան շրջանային գործադիր կոմիտեյի կողմից:

Թիֆլիսի շրջանային ընտրական հանձնաժողովների անդամները հաստատվում են համապատասխան քաղաքային շրջանային խորհրդի կողմից, իսկ նախագահներ նշանակվում են Թիֆլիսի գործադիր կոմիտեյի կողմից:

10. Գյուղական ընտրական հանձնաժողովները կազմվում են գյուղխորհուրդներին կից: Գյուղական ընտրական հանձնաժողովների մեջ մտնում են՝ նախագահը, գյուղխորհրդի յերկու ներկայացուցիչը, մեկական ներկայացուցիչ՝ արհմիությունից, ՀԼԿՅԵՄ-ից, քաղբաժիններից, վոր գտնվում են տվյալ տերրիտորիայի սահմաններում, ազգային փոքրամասնություններից, կոլտնտեսականներից, բանվորներից (ֆաբրիկաների, գործարանների, խորհտնտեսությունների, ՄՏկայանների և այլն) և հասարակական կազմակերպություններից (կոոպերացիա, ՊԱՋԸ–Ավիաքիմ և այլն), ինչպես և Կարմիր Բանակից և նավատորմից (նրանց զորամասերի բնակավայրերում):

Գյուղական ընտրական հանձնաժողովի անդամները հաստատվում են գյուղական խորհրդի կողմից, իսկ նախագահներ նշանակվում են համապատասխան շրջանային գործադիր կոմիտեյի կողմից:

Քաղաքներին կցված գյուղական վայրերի գյուղական ընտրական հանձնաժողովների նախագահները նշանակվում են համապատասխան քաղաքային խորհրդի կողմից:

11. Բոլոր ընտրական հանձնաժողովների կազմի մեջ պետք է ապահովված լինի կանանց մասնակցությունը:

12. Ընտրական հանձնաժողովները պարտավոր են՝

ա) Ղեկավարել խորհուրդների և խորհուրդների համագումարների ընտրությունների նախապատրաստումը և անցկացումը համապատասխան տերրիտորիայի սահմաններում:

բ) Հետևել ընտրությունների օրինականության ու ժամանակին անցկացմանը:

գ) Ղեկավարել ստորադաս ընտրական հանձնաժողովների և նրանց լիազորների աշխատանքը:

դ) Համապատասխան գործադիր կոմիտեներին ներկայաց–

նել կազմալուծման յենթակա ստորադաս ընտրական հանձնաժողովները և բացարկ հայտնել հանձնաժողովների առանձին անդամների նկատմամբ:

յե) Հաշիվ պահանջել ստորադաս ընտրական հանձնաժողովներից նրանց կողմից կատարված աշխատանքների համար:

կ) Սահմանված ձևով ներկայացնել վերադաս ընտրական հանձնաժողովներին, համապատասխան խորհուրդներին և գործադիր կոմիտեներին տեղեկություններ, ընտրությունների ընթացքի մասին, հաշիվ տալ և հանձնել այդ ուղղությամբ բոլոր նյութերը:

ե) Ուղղել իրենց ներկայացուցիչներին ստորադաս ընտրական ժողովները՝ նրանց աշխատանքի և ընտրական կամպանիայի ընթացքի հետ ծանոթանալու համար:

ը) Քննել բոլոր գանգատներն ու բողոքները ստորադաս ընտրական հանձնաժողովների գործունեյության նկատմամբ և անհրաժեշտ դեպքում վերացնել նրանց վորոշումները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է ՎՍԽՀ ընտրական օրենսդրության կիրառման նկատմամբ տալ իշխանության մարմիններին և բնակչությանը բացատրություններ, վորոնք պարտադիր են վերջինների համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Քաղաքներին կցված գյուղական վայրերում կազմված ընտրական հանձնաժողովների նկատմամբ, վերադաս ընտրական հանձնաժողովի ֆունկցիաներն իրականացնում են համապատասխան քաղաքային ընտրական հանձնաժողովները:

13. Բացի 12-րդ հոդվածից բղխող ֆունկցիաներից, քաղաքային և գյուղական ընտրական հանձնաժողովները պարտավոր են՝

ա) Կազմել և հաստատել ընտրական իրավունքներից օգտվողների ցուցակը:

բ) Կազմել ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակը և ներկայացնել այն ի հաստատություն քաղաքային խորհուրդներին, շրջանային գործադիր կոմիտեներին ըստ պատկանելույն և հիշատակված մարմինների կողմից հաստատվելուց հետո հրապարակել այն:

գ) Համապատասխան տերրիտորիան բաժանել ընտրական թաղամասերի:

դ) Ընտրողներին հասցնել հասցեյագրած ծանուցագրերը և ձեռք առնել այլ միջոցներ ընտրական ժողովների տեղն ու ժամանակը նրանց հաղորդելու համար:



դ) Ընտրական թաղամասերը գործուղել իրենց լիազորներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Անվանական ընտրական ծանուցագրերը Թիֆլիսում ուղարկվում են միայն այն ընտրողներին, վորոնք գտնվում են ձեռնարկներից և հիմնարկներից դուրս և չեն ընդգրկված արհմիությունների կողմից:

14. Ընտրական հանձնաժողովները կազմվում են խորհուրդների ընտրությունների ժամանակ և արձակվում են ընտրական կամպանիան ավարտելուց մի ամիս անց Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կարգադրությամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1 Ընտրական հանձնաժողովները իրենց աշխատանքների համար օգտվում են այն գործադիր կոմիտեների, քաղաքային, շրջանային և գյուղական խորհուրդների ապարատից, վորոնց կից կազմված են նրանք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—2 Ընտրական հանձնաժողովների անդամներն իրենց կողմից հանձնաժողովում տարված աշխատանքի համար վարձատրություն չեն ստանում:

## ԳԼՈՒԽ 2

Ընտրողների և ընտրական իրավունքներից զրկված անձանց վորակումը:

15. Համաձայն Վրաստանի ՍԽՀ սահմանադրության, ընտրելու և ընտրվելու իրավունքից օգտվում են՝ անկախ ազգությունից, սեռից, սովորություններից և այլն, Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հետևյալ յերկսեռ քաղաքացիները, վորոնք մինչև ընտրության օրն արդեն 18 տարեկան են դառել:

ա) Ապրուստի միջոցը արտադրական և հասարակական օգտակար աշխատանքի շնորհիվ ձեռք բերող բոլոր բանվորներն ու ծառայողները, վորոնք զբաղված են արդյունաբերական, առևտրական ձեռնարկներում, տրանսպորտում և գյուղական տնտեսությունում, կոլտնտեսականները, աշխատավոր մենատնտեսները, վորոնք չեն օգտվում վարձու աշխատանքից, ոգուտ քաղելու նպատակով, տնայնագործներն ու արհեստավորները, խորհրդային և այլ հիմնարկների ծառայողները, ինչպես և այն անձինք, վորոնք զբաղված են տնային տնտեսությամբ և իրենց աշխատանքով ապահովում են հիշյալ կատեգորիայի անձանց աշխատանքի արտադրողականությունը:

բ) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի կարմիրբանակայիններն ու նավատորմայինները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ներկա հոդվածում հիշված անձինք իրենց ընտրական իրավունքը չեն կորցնում նաև այն դեպքում, յեթե զրկվել են աշխատունակությունից կամ ժամանակավորապես գործազուրկ են դարձել:

16. Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության քաղաքացիների հետ համահավասար ընտրական ակտիվ և պասսիվ իրավունքներից օգտվում են և այլ խորհրդային հանրապետությունների այն քաղաքացիները, վորոնք գտնվում են Վրաստանի Սոց. Խոր. Հանրապետության տերրիտորիայի սահմաններում և համապատասխանում են 15-րդ հոդվածով նախատեսված պայմաններին.

17. Յելնելով բոլոր յերկրների և ազգությունների աշխատավորների համերաշխությունից, Վրաստանի ՍԽ Հանրապետության քաղաքացիների բոլոր քաղաքական իրավունքների հետ միասին ակտիվ և պասսիվ ընտրական իրավունք է տրվում նաև այն օտարյերկրացիներին, վորոնք աշխատելու նպատակով ապրում են նրա տերրիտորիայի սահմաններում և պատկանում են բանվոր դասակարգին կամ վարձու աշխատանքից չօգտվող գյուղացիների թվին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կամ Աբխազիայի Ավտոնոմ ՍԽՀ, Աջարիստանի Ավտոնոմ ՍԽՀ և Հարավ-Օսեթիայի Ավտոնոմ Մարզի Կենտգործկոմին կից ընտրական հանձնաժողովների վորոշման համաձայն խորհուրդների ընտրություններին մասնակցելու իրավունք կարելի յե տալ և այն օտարյերկրյա քաղաքացիներին, վորոնք պատկանում են ծառայողների և ինժեներա-տեխնիկական պերսոնալի կատեգորիային, ապրում են ԽՍՀ Միության սահմաններում և կան բավականաչափ ապացույցներ, վոր նրանք լոյալ վերաբերմունք ունեն դեպի խորհրդային իշխանությունը:

18. Չեն ընտրում և չեն ընտրվում խորհուրդներում, թեկուզ և նրանք պատկանելիս լինեն 15-րդ հոդվածում հիշված քաղաքացիների կատեգորիային՝

ա) Այն անձինք, վորոնք դիմել են կամ ներկայումս դիմում են վարձու աշխատանքին՝ շահ ստանալու նպատակով:

բ) Այն անձինք, վորոնք ապրում են անաշխատ յեկամտով, այն է՝ կապիտալից, ձեռնարկներից կամ գույքից ստացված տոկոսներով, հասույթով և այլն:

գ) Այն անձինք, վորոնք պարապել կամ պարապում են մասնավոր առևտրով, ինչպես և առևտրական միջնորդի դեր կատարելով:



դ) Բոլոր ուղղությունների կրոնական պաշտամունքների նախկին և ներկա սպասավորները:

յե) Նախկին վոստիկանության, ժանդարմական հատուկ կորպուսի և պահնորդական բաժինների, ինչպես և Վրաստանի մենշևիկյան կառավարության ներքին գործոց մինիստրության հատուկ ջոկատի ծառայողներն ու ագենտները. Ռուսաստանի արքայական տան անդամները, ինչպես և այն անձինք, վորոնք ղեկավարել են վոստիկանության, ժանդարմերիայի և պատժիչ մարմինների գործողությունները:

զ) Այն անձինք, վորոնք քրեական դատարանի վորոշմամբ դատապարտված են սոցիալական պաշտպանության միջոցի, վորը զուգորդված է իրավունքների սահմանափակմամբ և մտել է արդեն օրինական ուժի մեջ՝ դատարանի դատավճռով սահմանված ամբողջ ժամկետի ընթացքում.

է) Այն անձինք, վորոնք սահմանված կարգով ճանաչված են հոգեկան հիվանդ կամ խելագար:

19. Քաղաքացիների առանձին կատեգորիայի մարդկանցից ընտրական իրավունքից զրկվում են՝

ա) Այն յերկրագործները, անասնապահները, տնայնագործներն ու արհեստավորները, վորոնք օգտվում են վարձու աշխատանքից (սեզոնային թե մշտական), այն ծավալով, վորն ընդլայնում է նրանց տնտեսությունը և հանում այն աշխատավոր տնտեսության սահմաններից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Աշխատավորական տնտեսությունը տվյալ դեպքում բնորոշվում է վարձու աշխատանքի օժանդակիչ բնույթով և տվյալ տնտեսության բոլոր աշխատունակ անդամների պարտադիր մասնակցությամբ տնտեսության առօրյա աշխատանքներում:

բ) Կուլակները, վորոնք հակախորհրդային և հակակոլտնտեսային շարժման համար աքսորված են իրենց նախկին գյուղական և ավանային վայրերից:

գ) Առևտրականները, սպեկուլյանտները, շահագետները, առևտրական միջնորդները և վաշխառուները:

դ) այն անձինք, վորոնք կապալով են վերցնում հողը, տիրոջ համար վոչ ձեռնտու, ստրկացնող պայմաններով և այդ հանգամանքը ճանաչված է շրջանային հարկահավաք հանձնաժողովի կողմից:

յե) այն անձինք, վորոնք կապալով են վերցնում այգիներ, խաղողի տունկեր և այլն, առևտրական և արդյունաբերական շահագործման նպատակով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ Եթե այգիներն ու խաղողի տունկերը կապալով են տրված այն պայմաններով, վոր չեն կարող հիմք ծառայել կապալառուներին հարկադրելու գյուղատնտեսական հարկով անհատական կարգով, ապա այդ հանգամանքը հիմք չի տալիս զրկելու կապալառուներին նաև ընտրական իրավունքներից:

զ) այն անձինք, վորոնք սիստեմատիկ կերպով վարձով են տալիս ձեռնարկության կամ ապրելու համար հարմարեցրած առանձին շենքեր, պայմանով միայն, յեթե վարձու տրված շենքերից ստացված յեկամուտի չափի հետևանքով համապատասխան տնտեսությունը վերադասվում է տնտեսությունների այն կատեգորիայի շարքը, վորոնք յենթակա յեն հարկման գյուղատնտեսական հարկով՝ անհատական կարգով:

է) արդյունաբերական տիպի ձեռնարկների տերերն ու կապալառուները, վորոնք շահագործում են ազգաբնակչության՝ այս կամ այն աշխատանքը տներում բաժանելով կամ ձեռնարկը կապալով կամ յենթակապալով տալով:

ը) սպիտակ բանակների նախկին սպաներն ու պաշտոնյաները (յեթե նրանք չեն ընկնում ներկա հրահանգի 20 հոդվածի «թ» կետի ույժի տակ), նույնպես և հակահեղափոխական բանդաների ղեկավարները:

թ) Այն անձինք, վորոնք ուղղակի թե անուղղակի ղեկավարել են վոստիկանության, ժանդարմերիայի և պատժիչ օրգանների գործունեությունը թե ցարական իրավակարգում և թե սպիտակ հակահեղափոխական կառավարությունների ժամանակ, ինչպես որ՝ նախկին մինիստրներ, նրանց ընկերները, մինիստրությունների դեպարտամենտների դիրեկտորներ, գեներալ-նահանգապետներ, հատուկ պաշտպանության օրգանների գլխավորողներ, ռազմական և քաղաքացիական նահանգապետներ, փոխնահանգապետներ, ինչպես և նրանց կից հատուկ հանձնարարությունների պաշտոնյաներ, ներքին գործոց մինիստրությունների պաշտոնյաներ, բանտային վարչության բոլոր նախկին ծառայողներ, թագավորական տան անդամները, գավառական կամ նահանգական ազնվականության ղեկավարներ, քրեական դեպարտամենտի նախագահներ ու անդամներ, նույնպես և դատական ատյանների դատախազներ և դատախազների օգնականներ, առանձին կարևոր գործերի դատաքննիչներ, ռազմական դատարանների նախագահներ և անդամներ, հետաքննիչ հանձնաժողովների նախագահներ ու անդամներ, վորոնք գործել են հակահեղափոխական կառավարությունների հողամասե-



րում, նահանգական վարչությունների անդամներ, զեմսկի, գյուղացիական և գավառական վարչապետներ և այն անձինք, վորոնք մինչև հեղափոխությունը գրաված են յեղել հրամանատար պաշտոններ դիսցիպլինար գումարտակներում, նաև այն անձինք, վորոնք Վրաստանի մենշևիկյան կառավարության ժամանակ յեղել են՝ մինիստրներ և նրանց օգնականներ, գեներալ-նահանգապետներ, արտակարգ կոմիսարներ, ժողովրդական գվարդիայի շտաբի նախագահներ կամ անդամներ, ռազմադաշտային և արտակարգ դատարանի անդամներ կամ դատախազներ, ներքին գործոց մինիստրության գրասենյակի դիրեկտորներ կամ փոխդիրեկտորներ, նույն մինիստրության վարչական բաժնի վարիչ կամ վարչի օգնական, ադմինիստրացիայի և բաժնի տեսուչ:

ժ) Վարչական կարգով արտաքսվածները՝ արտաքսման ժամանակի ընթացքում, և այն անձինք, վորոնք զրկված են ընտրական ձայնի իրավունքից դատական վորոշումով:

ի) Այն անձանց ընտանիքի անդամները, վորոնք զրկված են ընտրական իրավունքներից ներկա հրահանգի 18-րդ հոդվածի «ա», «բ», «գ», «դ» «յե» և նրանց համապատասխան կետերի հիման վրա, այն դեպքերում միայն, յեթե նրանք տնտեսապես կախում ունեն ընտրական իրավունքներից զրկվածից և իրենց գոյությունը պահպանելու համար չունեն հասարակական օգտակար ինքնուրույն աշխատանք:

ԾԱՆՈԹ.— Ազատազրկման վայրերում գտնվողները խորհուրդների ընտրություններին չեն մասնակցում:

20. Ընտրական իրավունքներից չեն զրկվում ստորև հիշված անձինք, յեթե նրանք այդ իրավունքներից չեն զրկվում այլ հիմունքներով:

ա) Կոլտնտեսականները, և աշխատավոր մենատնտեսները, վորոնք իրենց տնտեսության մեջ հացահատիկները, տեխնիկական մշակույթները, խոտերը և այլն հավաքելու համար, վորոշ հանգամանքներից դրդված ժամանակավորապես օգտվում են մի բանվորի վարձու աշխատանքով, այն է՝ հիվանդության, զորահավաք, բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի շարքերը կանչվելու պատճառով, հասարակական գծով վորևե տեղ ընտրվելու պատճառով, վորը պահանջում է կտրվել սեփական տնտեսությունից – սրանք ձայնից չեն զրկվում:

բ) Այն կոլտնտեսականները և աշխատավոր մենատնտեսները, վորոնք մեկնում են սեզոնային աշխատանքի և իրենց բացակայության ընթացքում իրենց տնտեսության մեջ գործադրում են վարձու ույժ, սակայն մի բանվորից վոչ ավելի:

գ) Գործարանային և խորհտնտեսությունների այն բանվորների ու նրանց ընտանիքի անդամները, որոնք գյուղական տնտեսությունից իրենց կապը չեն խզել և իրենց տնտեսության մեջ օգտվում են մեկ բանվորից վոչ ավելի բանվորական ույժից:

դ) Կուլտուրականները և աշխատավոր մենատնտեսները՝ հողագործ, անասնապահ և ձկնորս գյուղացիները, որոնք ծախու չեն հանում իրենց աշխատանքի արդյունքը:

յե) Ձնայնագործները և արհեստավորները, որոնք իրենց տնտեսությունը վարում են առանց վարձու ույժի կիրառման, ինչպես և նրանք, որոնք իրենց արդյունաբերության բնույթից դրդված՝ օգտվում են մեկ հասուն բանվորից կամ իրենց աշխատանքային տնտեսությունը վարում են յերկու աշակերտի օգնությամբ:

Ծանոթ. — Ներկա կետում հիշված տնայնագործներն ու արհեստավորներն ընտրական իրավունքից չեն զրկվում նաև այն դեպքում, յեթե նրանք շուկա չեն հանում բացառապես իրենց արտադրության արդյունքը:

զ) Ժամանակին մոբիլիզացիոն կարգով սպիտակ բանակների շարքերը կանչված բանվորները, աշխատավոր գյուղացիները և կազակները, ծառայողները, տնայնագործները և արհեստավորները:

է) Սպիտակ բանակների այն նախկին սպաներն ու պաշտոնյաները, որոնք հետագայում յեղել են Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում և ակտիվ մասնակցություն են ցույց տվել խորհրդային իշխանությանը զենքով պաշտպանելու գործում, ինչպես և նրանք, որոնք ներկայումս էլ ծառայում են Բանվորա – Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում:

Ծանոթ. — Խորհրդային իշխանությունը զինված պաշտպանելու մեջ ակտիվ մասնակցելու տակ պետք է հասկանալ այն բոլոր ռազմական առաջադրությունների իրացումը, որոնք տրվել են Բանվորա – Գյուղացիական Կարմիր Բանակի թե զորամասերում և թե վարչատներում, ինչպես հակառում, նույնպես և թիկունքում:

ը) Այն անձինք, որոնք ապրում են պետական փոխառությունների ստացած տոկոսներով և շահումներից ստացած յեկամուտներով, այն խնայողություններից ստացած յեկամուտներով, որոնք գտնվում են պետական աշխատավորական խնայողական դրամարկղներում:

Ծանոթ. — ԽՍՀ Միության քաղաքացիների կողմից արտասահմանից սահմանված կարգով դրամական և արժեքների փոխադրություններ (թոշակ, ժառանգություն, ալիմենտ, ապահովագրական վարձատրություն և այլն) ստանալը ինքնին հիմք չի ծառայում այդ անձանց ընտրական իրավունքից զրկելու համար:

թ) Աքսորանքի և պատերազմի հաշմանդամները, որոնք հասուն պայմաններից դրդված պարապում են ձեռքի վրա և կամ լարյոկներից մանր առևտրով, ինչպես և այն անձինք, որոնք ժամանակավորապես հաշմանդամ դառնալու, կամ գործազուրկ լինելու հետևանքով ժամանակավորապես պարապել են մանր առևտրով:

ժ) Այն անձինք, որոնք իբրև իրենց աշխատանքի վարձատրություն, տոկոսներ են ստանում պետական և կոոպերատիվ կազմակերպություններից:

ի) Այն անձինք, որոնք աշխատում են վարձով կամ կրոնական համայնքների ընտրությամբ՝ կրոնական ծեսերի վարչական – տնտեսական և տեխնիկական սպասարկումով, ինչպես և կրոնական շենքերին ծառայելով, որ. յերգիչներ, յերգեհոն նվագողներ, պահապաններ, սպասավորներ, զանգահարներ և այլն, նույնպես և ծխական խորհուրդների անդամներ:

լ) Հասարակական օգտակար աշխատանքով զբաղվող ազատ արհեստի աշխատավորները:

խ) Ընտրական իրավունքից զրկված անձանց ընտանիքների անդամները, յեթե նրանք տնտեսապես կախում չունեն այդ մարդկանցից և իրենց համար գոյության աղբյուր են ծառայեցնում իրենց հասարակական – օգտակար աշխատանքը:

Ընտրական իրավունքից չեն զրկվում ընտրական իրավունքներից զրկվածների այն որդիները, որոնք 1925 և հետագա թվերին արդեն հասել են հասունության տարիքին, մինչև հասունանալը գտնվել են ծնողների խնամքի տակ և ներկայումս պարապում են ինքնուրույն հասարակական – օգտակար աշխատանքով, թեկուզ և նրանք ապրելիս լինեն իրենց ծնողների հետ միասին:

## ԳԼՈՒԽ 3

## ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21. Ընտրական իրավունքներից զրկված՝ ինչպես շահագործող դասակարգին պատկանող անձանց (կալվածատերեր, բուրժուազիա, կրոնական պաշտամունքի սպասավորներ), նույնպես և վոստիկանության, ժանդարմերիայի և բանտային վարչության նախկին ստորին տեխնիկական ծառայողների ընտրական ի-

րավունքները կարելի յե վերականգնել այն դեպքում, յեթե նրանք 5 տարուց վոչ պակաս ժամանակվա ընթացքում պարապում են արտադրական և հասարակական-օգտակար աշխատանքով և ապացուցել են իրենց լոյալ վերաբերմունքը դեպի խորհրդային իշխանությունը:

Այդ անձնավորությունների ընտրական իրավունքները վերականգնվում են ռայոնական և Թիֆլիսի, Քութայիսի, Փոթիի, Բաթումի և Սուխումի քաղաքային ընտրական հանձնաժողովների կողմից. Աբխազիայի և Աջարիստանի ԽՍ հանրապետությունների Կենտրգործկոմներին կից և Հարավ-Օսեթիայի Ավտոնոմ մարզի կամ կենտրոնական ընտրական հանձնաժողովների կողմից: Ընտրական իրավունքների մեջ վերականգնելու սրանց վերաբերող վորոշումները պիտի հաստատվեն համապատասխան շրջգործկոմի, քաղաքային խորհրդի, ավտոնոմ հանրապետության կամ մարզի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կամ Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կողմից ըստ պատկանելույն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1: Վերոհիշյալ մարմինները կարող են վերականգնել այն անձանց իրավունքները, վորոնք արհեստակցական միության անդամ են և աչքի յեն ընկնում իրենց ազնիվ աշխատանքով և խորհրդային իշխանության նվիրվածության և կամ համապատասխան միջնորդության պատճառով՝

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2: Ընտրական հանձնաժողովների աշխատանքն ավարտելուց հետո, ներկա հոդվածում հիշված անձանց միջնորդությունը ընտրական իրավունքներում վերականգնելու մասին անմիջականորեն լուծվում է շրջանային գործադիր կոմիտեի, Թիֆլիսի, Քութայիսի, Փոթիի և Սուխումի քաղաքային խորհուրդների, Աբխազիայի ավտոնոմ ՍԽՀ, Աջարիստանի ավտոնոմ ՍԽՀ և Հարավ-Օսեթիայի ավտոնոմ մարզի կենտրգործկոմների նախագահությունների կամ Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության կողմից:

22. Ներկա հրահանգի 18-րդ հոդ. «Յե» կետի և 19-րդ հոդ. «ը» և «թ» կետերի համաձայն, ընտրական իրավունքից զրկված անձանց, բացառությամբ 21-րդ հոդվածում հիշված վոստիկանության, ժանդարմերիայի և բանտային տեսչության, ստորին տեխնիկական ծառայողների, ընտրական իրավունքները կարելի յե վերականգնել Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության հատուկ վորոշմամբ՝ այն դեպքում, յեթե նրանք 5 տարուց վոչ պակաս ժամանակվա ընթացքում պարապում են արտադրական և հասարակական օգտակար – աշխատանքով և ապացուցել են իրենց լոյալ վերաբերմունքը դեպի խորհրդային իշխանությունը:



23. Արտաքսված կուլակների զավակները, վորոնք գտնվում են ինչպես հատուկ վայրերում և աքսորավայրերում, այնպես և այդ վայրերից դուրս, վերականգնվում են ընտրական իրավունքներում շրջանային գործադիր կոմիտեների կողմից ըստ բնակավայրի, միայն այն պայմանով, յեթե նրանք պարապում են հասարակական – օգտակար աշխատանքով և աշխատում են բարեխղճորեն իրենց աշխատանքին:

24. Հակախորհրդային և հակակոլտնտեսային յելույթների համար իրենց գյուղական և ավանային վայրերի սահմաններից արտաքսված կուլակները, վորոնք աչքի յեն ընկնում իրենց բացարձակ ազնիվ աշխատանքով և խորհրդային իշխանության միջոցառումների պաշտպանությամբ, կարող են վերականգնել ընտրական իրավունքներում Աբխազիայի ավտոնոմ ՍԽՀ, Աջարիստանի ավտոնոմ ՍԽՀ և Հարավ – Օսեթիայի ավտոնոմ մարզի Կենտրոնական Գործադիր Կոմիտեների նախագահությունների կամ Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության կողմից ըստ ՆԳԺԿ-ի համապատասխան մարմինների ներկայացման, յեթե արտաքսման պահից անցել է 5 տարի, իսկ վոսկու և պլատինի արդյունաբերության մեջ 3 տարի աշխատողները՝ 3 տարուց հետո:

Այն կատեգորիայի անձինք, վորոնք հանդիսանում են արտադրության մեջ վորպես հարվածայիններ և ակտիվորեն մասնակցում են հասարակական աշխատանքներում, մանավանդ յերիտասարդները, կարող են վերականգնվել իրենց ընտրական իրավունքներում, նույն մարմինների կողմից, հիշյալ ժամկետների անցնելուց առաջ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Ընտանիքի ավագի վերականգնումն ընտրական իրավունքներում տարածվում է ընտանիքի բոլոր անդամների վրա, յեթե վերջինների նկատմամբ չկա այլ հիմունքներ ընտրական իրավունքներից զրկելու համար:

25. Վարչական կարգով արտաքսվածները, ինչպես և այն անձինք, վորոնց ընտրական իրավունքից զրկելու մասին դատական վորոշումներ կան (հոդ. 19-րդ, կետ «ժ»), ընտրական իրավունք ձեռք են բերում վարչական կամ դատական միջոցառումի ույժը կորցնելուց հետո, առանց իշխանության համապատասխան օրգանների հատուկ վորոշման, յեթե միայն այդ անձն

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР

ընտրական իրավունքներից չի զրկված ուրիշ վորևէ հիմունքով:

26. Այն անձինք, վորոնց ընտրական իրավունքները վերականգնել են վերադաս խորհուրդները կամ գործադիր կոմիտեները, չեն կարող իրավունքից զրկվել նույն հիման վրա իշխանության ստորադաս մարմինների կողմից:

27. Այն անձինք, վորոնց միջնորդությունը նրանց ընտրական իրավունքներում վերականգնելու մասին մերժված է Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության վորոշմամբ, կարող են վերստին միջնորդություն հարուցել վոչ շուտ, քան մերժման պահից մի տարի անց: Բացառություն թույլատրվում է միայն նոր հանգամանքներ առաջանալու հետևանքով կամ արհմիությունների կամ հասարակական կազմակերպությունների միջնորդության հիման վրա:

## ԳԼՈՒԽ 4.

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԱԾՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28. Ընտրողների և ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակները կազմելիս, համապատասխան օրգանները պարտավոր են ղեկավարվել ներկա հրահանգի 15–20 հոդվածներով, վորոնք՝ համաձայն ՎՍԽՀ սահմանադրության, վորոշում են թե ընտրողների շրջանը և թե ընտրական իրավունքներից զրկված առանձին կատեգորիայի քաղաքացիների շրջանը:

29. Քաղաքային (Թիֆլիսում՝ քաղաքային շրջանների) և գյուղական ընտրական հանձնաժողովները կազմում և հաստատում են ընտրական իրավունքից օգտվողների ցուցակը, գյուղերում՝ յուրաքանչյուր գյուղին առանձին, քաղաքներում՝ ըստ արտադրական կամ արհեստակցական միավորների: Ձեռնարկներից ու հիմնարկներից դուրս մնացած և արհեստակցական միությունների շարքերում չգտնվող անձանց ցուցակները կազմվում են ըստ տերիտորիալ միավորների (շրջանի, թաղամաս և այլն):

30. Ընտրական իրավունքներից զրկվածների անվանական ցուցակի մշտական հաշվառքի պարտավորությունը դրվում է գյուղական խորհուրդների վրա:

31. Ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակը կազմում են փաստաթղթերի բնույթ կրող տեղեկությունների հիման վրա 30-րդ հոդվածում հիշված մարմինները: Նման տեղեկություններ հանդիսանում են՝

ա) Դատարանի միջոցով ընտրական իրավունքներից զրկվածների և դատարանի վորոշմամբ իրենց մշտական բնակա-



վայրից արտաքսված անձանց նկատմամբ – դատավճռի պատճենները և համապատասխան դատական մարմինների տեղեկանքները:

բ) Օգուտ քաղելու նպատակով, վարձու աշխատանք գործադրողների, առևտրով պարապողների և վոչ աշխատանքային յեկամուտներով ապրող անձանց նկատմամբ – Ֆինանսական օրգանների տված տեղեկանքը՝ յեկամտային և արդյունաբերական հարկեր վճարելու մասին և ապահովագրական գանձարկղների տեղեկանքներն այն մասին, վոր տվյալ անձնավորությունները ապահովագրական մուծումներ են կատարում:

գ) Հոգեկան հիվանդների և խելագարների նկատմամբ առողջապահական օրգանների կողմից արձանագրությունների՝ կամ հոգեկան հիվանդ, կամ խելագար ճանաչելու արձանագրությունների վավերացրած պատճենները, իսկ խնամակալության տակ գտնվող անհասների նկատմամբ – տեղեկանքներ խնամակալության համապատասխան մարմիններից:

դ) Նախկին վոստիկանության ծառայողների և գործակալների, կրոնական պաշտամունքների սպասավորների և ներկա հրահանգի 19-րդ հոդվածում հիշված այլ անձանց նկատմամբ— վարչական մարմինների կամ քաղաքային և գյուղական խորհուրդների կամ ՆԳԺԿ տեղեկանքները:

32. Այս կամ այն անձի ընտրական իրավունքներից զրկվածների կատեգորիաներից մեկին պատկանելու մասին վորևէ աղբյուրից տեղեկություններ և հայտարարություններ (գրավոր կամ բանավոր) ստացվելու դեպքում, հաշվառք տանող մարմինները պարտավոր են փաստերով ստուգել այդ տեղեկությունների ու հայտարարությունները և հավաքել տվյալ անձի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթային տվյալները:

33. Հաշվառք տանող մարմինները ընտրական իրավունքներից զրկվածների մասին իրենց հավաքած տեղեկությունները հանձնում են համապատասխան գյուղական, քաղաքային և քաղաքային շրջանների ընտրական հանձնաժողովներին, վորոնք և հիմք են ծառայում ցուցակներ կազմելու համար:

34. Ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները կազմվում են խորհուրդների ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում, բացառապես գյուղական, ավանային, քաղաքային և շրջանային ընտրական հանձնաժողովների կողմից և ներկայացվում են ի հաստատություն՝ գյուղական վայրերում և քաղաքներում, վորոնք ունեն գյուղական խորհուրդներ՝ շրջանային գործադիր կոմիտեներին, իսկ այն քա-

ղաքներում, վորոնք ունեն քաղաքային խորհուրդներ և նրանց կցված գյուղական խորհուրդներ՝ քաղաքային և շրջանային խորհուրդներին, ըստ պատկանելության:

Ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակը կազմվում է փաստաթղթի բնույթ կրող տվյալների հիման վրա (հոդ. 31):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Այն անձանց, վորոնք մտցրված են ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակը, պետք է տրվի համապատասխան տեղեկանքներ, համաձայն նրանց պահանջի:

35. Այն օտարյերկրացիները, վորոնք ապրում են Վրաստանի ԽՍ Հանրապետության հողամասում, պատկանում են վոչ աշխատավորական կատեգորիային, վորոնք համաձայն ՎՍԽՀ սահմանադրության և ներկա հրահանգի չեն օգտվում ընտրական իրավունքներից չպետք է ընկնեն վոչ ընտրական իրավունքներից օգտվողների և վոչ էլ ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակը:

36. Ընտրական հանձնաժողովները հրապարակում են շրջանային գործադիր կոմիտեների, քաղաքային շրջանային խորհուրդների կողմից հաստատած ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակը տեղական մամուլում կամ կախում են աչքի ընկնող տեղ համապատասխան խորհրդի ընտրություններից 15 օր առաջ:

37. Ընտրական հանձնաժողովների աշխատանքները վերջանալուց հետո, ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակը մտցվում են այն անձինք, վորոնք զրկվել են ընտրական իրավունքից դատարանի միջոցով կամ արտաքսված են վարչական կարգով ՆԳԺԿ մարմինների միջոցով: Գյուղական վայրերում և քաղաքներում, վորոնք ունեն գյուղական խորհուրդներ, վերահիշյալ անձանց ընտրական իրավունքներից զրկվածներին այդ ցուցակների մեջ մտցնելն ընկնում է շրջանային գործադիր կոմիտեների վրա, իսկ քաղաքներում և նրանց կցած գյուղերում, վորոնք ունեն քաղաքային խորհուրդներ՝ քաղաքային շրջանային խորհուրդների վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Այլ հիմունքներով ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակում մուծումներ կատարվում են շրջանային գործադիր կոմիտեյի, քաղաքային և շրջանային խորհուրդների կողմից, ըստ պատկանելության, ընտրական հանձնաժողովների միջև ընկած ժամանակաշրջանում, այն պայմանով, յեթե տվյալներն անվիճելի յեն:

38. Ընտրական իրավունքներից զրկվածների հաստատված ցուցակներից՝ սխալմամբ վերջինում նշված քաղաքացիներին հա-



նելը կատարվում է ինչպես այդ ցուցակները կազմող մարմին-
ների (շրջանային կենտրոնական կոմիտեների, քաղաքային և
շրջանային խորհուրդների), նույնպես և Աբխազիայի ավտոնոմ
ԽՍՀ, Աջարիստանի ավտ. ՍԽՀ և Հարավ-Օսեթիայի ավտ.-մար-
զի ընտրական հանձնաժողովների, և կենտրոնական ընտրական
հանձնաժողովի կողմից:

### ԳԼՈՒԽ 5.

## ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՐԿՎԱԾՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՑԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

39. Այն անձինք, վորոնք մտցվել են ընտրական իրավունք-
ներից զրկվածների ցուցակը, կարող են բողոք ներկայացնել ներ-
կա հրահանգի 40—44-րդ հոդվածներում մատնանշված կարգով:

40. Քաղաքացիներն իրենց բողոքները ներկայացնում են
ցուցակ կազմող ընտրական հանձնաժողովին:

41. Ընտրական հանձնաժողովը բողոքն ստանալով, պարտա-
վոր է 2 օրվա ընթացքում ամբողջ գործն իր յեզրակացության
հետ միասին, ուղղել շրջանային գործադիր կոմիտեյին, քաղա-
քային կամ շրջանային խորհրդին՝ ըստ պատկանե-
լիության. ըստ վորում, գյուղական ընտրական հանձնաժողովը
բողոքն ուղղում է շրջանային գործկոմին՝ շրջանային ընտրական
հանձնաժողովի միջոցով, վորը իր հերթին, տալիս է իր յեզրա-
կացությունը նույնպես 2 օրվա ընթացքում:

Ծանոթություն. — Քաղաքներին կցած գյուղական վայ-
րերում, գյուղական ընտրական հանձնաժողովները բողոքներն
ուղղում են համապատասխան քաղաքային խորհրդին՝ քաղաքա-
յին ընտրական հանձնաժողովի միջոցով, վորն իր հերթին, 2 օր-
վա ընթացքում տալիս է բողոքի նկատմամբ իր յեզրակացու-
թյունը:

42. Շրջանային գործադիր կոմիտեյի, քաղաքային կամ շըր-
ջանային գործադիր կոմիտեյի նախագահությունները 2 օրվա ըն-
թացքում քննում են բողոքը և իրենց վորոշումը հայտնում են
բողոքն ուղղողին, համապատասխան ընտրական հանձնաժողովի
միջոցով:

43. Ընտրական իրավունքներից զրկվածներին ցուցակից հա-
նելը բողոքատվին մերժելու մասին շրջանային գործադիր կոմի-
տեների, քաղաքային և շրջանային խորհուրդների նախագահու-
թյան կողմից հանած վորոշման դեմ բողոք կարելի յե ներ-
կայացնել՝

ա) շրջանային գործադիր կոմիտեների և ինքնուրույն վար-

չափման — տնտեսական միավոր կազմող քաղաքային խորհուրդների նկատմամբ — կենտրոնական ընտրական հանձնաժողովին կամ Աբխազիայի Ավտոնոմ ԽՍՀ, Աջարիստանի ԽՍՀ, Հարավ-Օսեթիայի ավտոնոմ մարզի ընտրական հանձնաժողովներին ըստ պատկանելության, բ) շրջանային գործադիր կոմիտեներին յենթակա քաղաքային խորհուրդների դեմ՝ շրջանային գործադիր կոմիտեներին, շրջանային խորհուրդների վորոշման դեմ, քաղաքային խորհրդին ստացված բողոքները վերոհիշյալ մարմինները քննության են առնում 7 որվա ընթացքում և իրենց վորոշման մասին հայտնում են բողոքողներին և համապատասխան շրջանային գործադիր կոմիտեներին, քաղաքային շրջանային խորհուրդներին:

Ծանոթություն. — Ներկա հոդվածում հիշված բողոքները ներկայացվում են այն շրջանային գործադիր կոմիտեների նախագահությունների միջոցով, վորոնք և կայացրել են առաջին վորոշումը բողոքը բավարարելու կամ մերժելու մասին: Նախագահությունը պարտավոր է 2 որվա ընթացքում բողոքը և ընտրական իրավունքներից զրկելու հիմք ծառայող բոլոր նյութերը իր յեզրակացության հետ միասին հանձնել ըստ պատկանելության:

44. 43-րդ հոդվածում («բ» և «գ») հիշված բողոքների նկատմամբ շրջանային գործադիր կոմիտեների հանած վորոշման դեմ կարելի յե բողոք ներկայացնել կենտրոնական ընտրական հանձնաժողովին կամ Աբխազիայի ավտոնոմ ԽՍՀ, Աջարիստանի ավտոնոմ ԽՍՀ և Հար.-Օսեթիայի ավտոնոմ մարզի ընտրական հանձնաժողովներին ըստ պատկանելության:

45. Ընտրական հանձնաժողովների աշխատանքներն ավարտելուց հետո, ընտրական ձայնից զրկված անձանց խնդիրները քննվում են համապատասխան խորհուրդների և գործադիր կոմիտեների կողմից:

46. Ընտրությունների վերաբերմամբ պետական հիմնարկներին և պաշտոնատար անձանց արած դիմումները, ինչպես և այդ հիմնարկների և պաշտոնատար անձանց կողմից տրված փաստաթղթերը և տեղեկանքներն ազատվում են հարկումներից:

47. Այն անձանց նկատմամբ, վորոնք բողոք են ներկայացրել իշխանության վերադաս օրգաններին՝ ընտրական իրավունքից ապօրինի զրկվելու առթիվ, մինչեվ նրանց բողոքի վերջնական քննարկելը—իրավունքների ուրիշ վոչ մի սահմանափակում չի գործադրվում, բացի խորհուրդների վերընտրությանը մասնակցելու իրավունքի սահմանափակումից:

Նույն հիմունքներով կրկնակի տրված բողոքները չեն ազատում բողոքատուներին նրանց նկատմամբ օրենքով սահմանված



և ընտրական իրավունքների զրկումից բխող սահմանափակման կիրառումից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Դաշնակից մյուս հանրապետություններում ընտրական իրավունքներից զրկված և հետագայում մշտապես բնակվելու համար Վրաստանի ՍԽՀ տեղափոխված անձանց ընտրական իրավունքների վերաբերյալ հարցումների համար՝ Վրաստանի ՍԽՀ մարմինները վաղօրոք պետք է դիմեն այն վայրերի խորհուրդներին, ուր հիշյալ անձինք զրկված են իրավունքներից:

48. Այն անձինք, վորոնք [illegible] տեղծում ընտրողների համար՝ նրանց ընտրական պարտականությունները կատարելու գործում, պատասխ[illegible] ընթարկվում ՎՍԽՀ Քրեական Օրենսգրքի համաձայն:

## ԳԼՈՒԽ 6.
## ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

49. Յուրաքանչյուր ընտրող կատարում է իր ընտրական պարտականությունը միայն մի տեղում: Յեթե տվյալ անձի աշխատանքի բնույթը կամ արհեստը թույլ են տալիս նրան ոգտվելու ընտրական իրավունքներից մի քանի հիմնարկության մեջ, ապա նրան ընտրելու իրավունք տրվում է այնտեղ, վորտեղ նա մասնակցելու յե ընտրություններին:

50. Խորհուրդների անդամների և թեկնածուների ընտրությունը տեղի յե ունենում ընտրական ժողովներում:

51. Ընտրական ժողովները հրավիրվում են ընտրական հանձնաժողովների կամ նրանց լիազորների կողմից:

Ընտրական ժողովի տեղի և ժամանակի մասին ընտրողներին տեղեկացնում են անվանական ծանուցագրերով աչքի ընկնող տեղերում հայտարարություններ փակցնելով, մամուլում հայտարարելով և այլն, ժողովի բացվելուց 5 օր առաջ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Թիֆլիսում ձեռնարկների և հիմնարկների կազմի մեջ մտնող և արհեստակցական միությունների կ. գ-մից ընտրված անձինք՝ ընտրություններին մասնակցելու համար ստանում են հատուկ տոմսեր իրենց ձեռնարկից կամ հիմնարկից, կամ համապատասխան արհեստակցական միությունից:

52. Քաղաքներում և քաղաքատիպ ավաններում ընտրական ժողովները կազմակերպվում են ըստ արտադրական միավորների (ըստ ձեռնարկների, հիմնարկների), արհեստակցական միությունների:

Արդյունաբերական խոշոր ձեռնարկներում ընտրություն-

ները կարելի յե կատարել առանձին ցեխերում՝ համապատասխան քաղաքային խորհրդի կամ շրջանային գործկոմի թույլտվության:

53. Ձեռնարկություններում և հիմնարկություններում չաշխատող և պրոֆմիությունների մեջ չկազմակերպված քաղաքացիները, ինչպես օրինակ՝ տնայնագործները, տանտիկինները, կառապանները և այլն, ընտրություններին մասնակցում են կամ մյուս ընտրողների հետ միասին արտադրական կամ արհեստակցական միավորներում, կամ թե նրանց համար առանձին ընտրական ժողովներ են կազմակերպվում ըստ տերիտորիալ միավորների (շրջան և այլն):

54. Քաղաքներում ընտրական շրջանը պետք է կազմակերպվեն այն հաշվով, վոր ամեն մի շրջանից ընտրվի հինգ պատգամավորից վոչ ավելի:

55. Գյուղական խորհուրդների ընտրությունները կատարվում են ըստ առանձին գյուղերի, յեթե սրանք բաղկացած են առնվազը 100 բնակչից: Բավականին փոքր գյուղերը կամ կցվում են մոտակա խոշոր գյուղերին կամ միանում և կազմում են մի ընտրական շրջան:

Խոշոր գյուղերը գյուղական խորհուրդ ընտրելու համար կարող են բաժանվել ընտրական մի քանի առանձին մասերի, սակայն ազգային փոքրամասնությունների կոմպակտ խմբակները կարող են առանձնացվել հատուկ շրջանների՝ ըստ ազգային հատկանշանի:

56. Քաղաքներից և գյուղերից դուրս գտնվող գործարանների, ՄՏկայանների և խորհտնտեսությունների բանվորներն ու ծառայողները կազմում են ինքնուրույն ընտրական շրջաններ կամ կցվում են ընտրվող խորհրդի շրջանում գտնվող մոտակա բնակավայրի ընտրական շրջանին:

57. Ընտրական բոլոր ժողովներում պետք է հաշվառքի յենթարկվեն ընտրություններին յեկած բոլոր քաղաքացիները:

Ընտրական ժողովներին կարող են ներկա գտնվել միայն այն անձինք, վորոնք օգտվում են ընտրական իրավունքներից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Ընտրական իրավունքներից զրկված անձինք խորհուրդների ընտրություններին մասնակցելու դեպքում, յենթարկվում են պատասխանատվության համաձայն ՎՍԽՀ քրեական Որենսգրքի 92 հոդվածի:

58. Ընտրական ժողովը համարվում է որինական, յեթե այնտեղ ներկա յե տվյալ ընտրական մասի ընտրողների ընդհանուր թվի առնվազն 50 տոկոսը:



Ընտրական ժողովը համարվում է չկայացած, յեթե ներկա յեն ընտրողների 50 տոկոսից պակաս, այդ առթիվ կազմվում է արձանագրություն, կցելով ընտրական արտադրությունում, իսկ ընտրական ժողովը հետաձգվում է մոտակա օրերից մեկի համար, տեղեկացնելով այդ մասին ընտրողներին:

Ծանոթություն. — Վրաստանի ԽՍՀ լեռնային մասերում ժողովը համարվում է որինական, յեթե ժողովին ներկա յեն ընտրողների վոչ պակաս 40 տոկոսը:

59. Ընտրական ժողովը բացվում է ընտրական հանձնաժողովի լիազորի կողմից և ղեկավարվում նախագահության կողմից: Նախագահության կազմի մեջ մտնում են՝ ընտրական հանձնաժողովի լիազորը (նախագահ) և ժողովում ընտրված յերկու անդամներ:

60. Ընտրական ժողովը բացելուց հետո նախագահը պարտավոր է՝

ա) Ծանոթացնել ժողովում ներկա, գտնվողներին ընտրությունների կարգի մասին և հայտարարել ՎՍԽՀ սահմանադրության 92 և 93 հոդվածներով (կամ ներկա հրահանգի 15 և 18 հոդ. հոդ.)— ընտրական իրավունքներից օգտվող և այդպիսիներից զրկված անձանց մասին:

բ) Հայտարարել տվյալ ընտրական շրջանի ընտրողների և ընտրություններին յեկածների թիվը:

գ) Հայտարարել ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակը:

դ) Հայտարարել թեկնածուների ցուցակները և առանձին թեկնածուների անուններն ու ազգանունները, վորոնք ստացվել են մինչև ընտրական ժողովում, ցույց տալով, թե ով է առաջարկել թեկնածությունը:

յե) Հայտարարել ընտրողների այն թիվը, վորը պիտի ընտրի տվյալ ժողովը:

61. Ընտրական ժողովի օրակարգը հաստատվում է ժողովի կողմից:

62. Ընտրությունների քվեարկությունը տեղի յե ունենում կամ ցուցակներով, կամ ըստ առանձին թեկնածուների, համաձայն ժողովի վորոշման:

Ցուցակներով քվեարկելիս, թույլ է տրվում առանձին թեկնածուների բացարկելը, համաձայն ժողովի վորոշման:

63. Թեկնածուների ցուցակները կամ առանձին թեկնածուները կարող են առաջարկվել ինչպես հասարակական, կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների, այնպես և առան-

ձին քաղաքացիների, կողմից թե հենց ընտրական ժողովում, թե՝ մինչև ընտրական ժողովը, հրապարակելով մամուլի միջոցով կամ փակցնելով աչքի ընկնող տեղում:

Ընտրական հանձնաժողովները և նրանց լիազորներն իրավունք չունեն առաջ քաշել իրենց կողմից վոչ թեկնածուների ցուցակներ, վոչ էլ առանձին թեկնածություններ:

64. Յուրաքանչյուր թեկնածություն նախորոք կարող է քննվել, յեթե ժողովը հարկավոր համարի:

65. Ընտրությունները կատարվում են բաց քվեարկությամբ: Ընտրված համարվում են նրանք, ովքեր քվեարկության ժամանակ ստացել են ընտրական ժողովում ներկա գտնվող ընտրողների ձայների մեծամասնությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Կարող են ընտրվել և այն անձինք, վորոնք ներկա չեն գտնվել ընտրական ժողովում:

66. Թիֆլիսում ընտրական ժողովները, բացի քաղաքի խորհրդի պատգամավորներից, ընտրվում են նաև շրջանային խորհրդի պատգամավորներ: Քաղաքային և շրջանային խորհուրդների պատգամավորների ընտրությունները կատարվում են առանձին քվեարկությամբ:

67. Յուրաքանչյուր ընտրական շրջանում ընտրվելիք անձանց քանակը վորոշվում է տեղական ընտրական հանձնաժողովի կողմից, տվյալ ընտրական շրջանի համաձայն ընտրողների կամ բնակչության թվի, ըստ ներկա հրահանգի 68, 69 և 70 հոդվածների:

68. Ընտրական հանձնաժողովը պատգամավորներ ընտրում է ըստ հետևյալ նորմաների՝

ա) Քաղաքային խորհուրդներ ընտրելիս ընտրվում է՝ Թիֆլիսում՝ 300 ընտրողից մեկ պատգամավոր, Քութայիսում և Բաթումում 200 ընտրողից մեկ պատգամավոր, Գուրջաանի 40 ընտրողից մեկ պատգամավոր, իսկ մնացած քաղաքներում՝ 100 ընտրողներից մեկ պատգամավոր:

բ) Թիֆլիսում շրջանային խորհուրդներ ընտրելիս՝ 200 ընտրողից մեկ պատգամավոր:

գ) Գյուղական խորհուրդներ ընտրելիս, բացի ներկա հոդվածի «դ» կետում հիշված դեպքերից, 100 բնակչից մեկ պատգամավոր, սակայն գյուղական խորհրդի բոլոր ընտրական հանձնաժողովներից վոչ պակաս 5 պատգամավորից:

դ) Աջարիստանի Ավտոնոմ ՍԽՀ գյուղական խորհուրդներ ընտրելիս՝ 50 ընտրողից մեկ պատգամավոր:

69. Յեթե ընտրական շրջանում լրիվ ընտրական նորմանե-



րից դուրս մնում են վորոշ քանակությամբ ընտրողներ կամ բնակիչներ, վորոնց թիվը չի հասնում ներկա հոդվածով նախատեսված ընտրական նորմաներին, բայց կազմում է համապատասխան ընտրական նորմայի կեսից վոչ պակասը, խորհրդի համար ընտրվում է մի լրացուցիչ պատգամավոր:

70. Այն ձեռնարկությունները, վորտեղ ընտրողների թիվը թեպետ չի կազմում ընտրական ամբողջական նորմա, բայց հասնում է այդ նորմայի 50 տոկոսին, ընտրում են խորհրդի համար մի պատգամավոր:

71. Յուրաքանչյուր ընտրական ժողով, պատգամավորներից զատ, ընտրում է նաև թեկնածուներ՝ պատգամավորների $1/3$ մասի չափով:

Խորհրդի անդամության թեկնածուներն ընտրվում են առանձին քվեարկությամբ, պատգամավորներից հետո:

72. Գյուղական խորհրդի անդամներ և անդամության թեկնածուներ ընտրելուց հետո՝ համապատասխան ընտրական ժողովներում առանձին քվեարկությամբ ընտրվում են գյուղական վերստուգիչ հանձնաժողովներ, բաղկացած հինգ անդամից և յերկու թեկնածուից:

73. Այն գյուղական խորհուրդներում, վորտեղ ընտրական թաղամասերի քանակը հնգից ավել է, գյուղական վերստուգիչ հանձնաժողովների անդամների և նրանց փոխանդամների ընտրությունները կատարվում են համապատասխան շրջգործկոմի կողմից սահմանված կարգով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ չեն կարող ընտրվել՝

ա) Այն գյուղական խորհրդի անդամները և փոխանդամները, վորին կից կազմվում է տվյալ վերստուգիչ հանձնաժողովը:

բ) Նախորդ կետում հիշված անձանց ծնողները, ամուսինները, յեղբայրները, քույրերը, զավակները, վերահսկողության տակ գտնվող գյուղական խորհրդի աշխատավորները և նրա իրավասության մեջ մտնող հիմնարկների և ձեռնարկների ղեկավարները, գ) տվյալ գյուղական խորհրդի նախկին անդամները և փոխանդամները, նաև տվյալ գյուղական խորհրդի նախկին աշխատավորները մի տարվա ընթացքում՝ հաշված այդ պաշտոններից հեռանալու օրից:

74. Ընտրական ժողովի ընթացքի և արդյունքների մասին կազմվում է արձանագրություն սահմանված ձևով: Արձանա-

գրությունը ստորագրվում է ընտրական ժողովի նախագահության կողմից:

75. Ընտրական ժողովն ամեն մի ընտրված պատգամավորի համար կազմում է անկետա սահմանված ձևով:

## ԳԼՈՒԽ 7.

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԵԿԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ. ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

76. Ընտրությունները բեկանվում են այն դեպքում, յերբ ԽՍՀ Միության, ԱՍՖԽՀ և ՎՍԽՀ սահմանադրությունները, ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի ընտրական հրահանգը, Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի ընտրական հրահանգը կամ ներկա հրահանգի կանոնները խախտվում են:

77. Ընտրությունների բեկանումը վերոհիշյալ պատճառներով կարող է կատարվել՝

ա) Լրիվին, այսինքն խորհրդի անդամների ամբողջ կազմի վերաբերմամբ.

բ) Մասնակի, այսինքն խորհրդի առանձին անդամների վերաբերմամբ՝ առանձին ընտրական շրջաններում:

78. Ընտրությունները բեկանվում են լրիվին, յեթե պատգամավորների կեսից ավելին ընտրվել է անօրեն կերպով (հոդ. 70) իսկ յեթե անօրեն ընտրությունները տեղի յեն ունեցել միմիայն մեկ կամ մի քանի ընտրական շրջաններում, վորտեղ ընտրվել է պատգամավորների պակաս մասը, ընտրությունները բեկանվում են միմիայն այդ ընտրական շրջաններում, իսկ մնացած ընտրական շրջաններում ընտրությունները համարվում են ճիշտ:

79. Ընտրությունները կարող են բեկանվել ինչպես ՎՍԽ Հանրապետության, մարզի քաղաքի կամ շրջանի կազմի մեջ մտնող ամբողջ հողամասում, այնպես և այդ հողամասի առանձին մասում: Ընտրությունները բեկանելու մասին հայտարարվում է ընդհանուրի գիտության, հայտարարելով տեղական մամուլում կամ ընտրողների ժողովներում:

80. Ընտրությունների լրիվ բեկանումը տեղի յե ունենում վերադաս գործադիր կոմիտեների վորոշմամբ, իսկ մասնավոր բեկանումները՝ համապատասխան գյուղխորհրդի կամ քաղաքային խորհրդի վորոշմամբ:

Թիֆլիսի շրջանային (թաղային) խորհուրդների նկատմամբ ընտրությունները լրիվ բեկանվում են ըստ Թիֆլիսի քաղաքային խորհրդի վորոշման:



81. Ընտրությունների նկատմամբ հայտարարություններն ու բողոքները տրվում են ընտրությունները ղեկավարող ընտրական հանձնաժողովին գրավոր կամ բանավոր, ընտրություններից հետո հինգ օրվա ընթացքում:

82. Ընտրական հանձնաժողովն ստացած դիմումները և գանգատները, իրենց բացատրություններով, 2 օրվա ժամանակամիջոցում ներկայացնում է վերադաս ընտրական հանձնաժողովին:

Վերադաս ընտրական հանձնաժողովն այդ դիմումները և գանգատները պարտավոր է քննել 5 օրվա ժամանակամիջոցում:

Ընտրությունները մասնակի կամ ամբողջովին բեկանելու կարիք յեղած դեպքում, ընտրական հանձնաժողովները անհապաղ հարց են բարձրացնում համապատասխան խորհրդի կամ գործադիր կոմիտեյի առջև (հոդ. 80, 83):

83. Ընտրությունների բեկանվելու դեպքում, նոր ընտրությունները կատարվում են ներկա հրահանգով սահմանված կարգով, և յեթե ընտրությունները բեկանված են լրիվին, նոր ընտրություններ կատարելու համար կազմակերպվում է համապատասխան ընտրական հանձնաժողով նոր կազմով: Իսկ յեթե ընտրությունները բեկանված են մասնակի կերպով, ապա ընտրական հանձնաժողովի կողմից նշանակվում են նոր լիազորներ:

84. Աշխատանքները վերջացնելուց հետո ընտրական հանձնաժողովներն ընտրությունների բոլոր նյութերը հանձնում են համապատասխան խորհրդին կամ գործադիր կոմիտեյին:

85. Յերբ ընտրողները յետ են կանչում պատգամավորներին, խորհուրդը նրանց փոխարինում է ընտրական նույն մասի թեկնածուներով, իսկ այդ թեկնածուների բացակայության դեպքում նշանակում է խորհրդի առանձին անդամների լրացուցիչ ընտրություններ:

Լրացուցիչ ընտրությունները հաստատվում են համապատասխան գյուղական, քաղաքային կամ շրջանային խորհուրդների կողմից:

86. Նախորդ հոդվածում հիշված կարգը պահպանվում է նաև այն դեպքում, յերբ խորհրդի կազմից դուրս են գալիս առանձին անդամներ մահվան, բնակության տեղը փոխելու, ընտրական իրավունքը կորցնելու հետևանքով և այլն:

87. Յեթե 85–86 հոդվածներում հիշված պատճառներով լրացուցիչ ընտրությունների յենթակա յե խորհրդի անդամների ամբողջ կազմի կեսից ավելին, սահմանված կարգով պետք է կատարեն խորհրդի անդամների ամբողջ կազմի վերընտրությունները: Վերընտրությունները հաստատվում են վերադաս խորհուրդների և գործադիր կոմիտեների կողմից:

88. Այն դեպքում, յերբ խորհրդի նախագահության կամ գործադիր կոմիտեյի կազմից դուրս ե գալիս անդամների կեսից ավելին, կատարվում ե խորհրդի նախագահության և գործադիր կոմիտեյի ամբողջ կազմի վերընտրությունը։

## ԳԼՈՒԽ 8.

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

89. Նորընտիր խորհրդի կազմակերպչական առաջին նիստը գումարվում ե համապատասխան ընտրական հանձնաժողովի կողմից։ Այդ ժողովում ընտրվում են խորհրդի գործադիր մարմինները։ Խորհուրդների համագումարները գումարվում են համապատասխան գործադիր կոմիտեների կողմից։

90. Քաղաքին կցված վայրերի գյուղական խորհուրդները ընտրում են իրենց պլենումում համապատասխան քաղաքային խորհրդի համար ներկայացուցիչներ (պատգամավորներ), ըստ նորմաների՝, Թիֆլիսին կցված վայրերի գյուղխորհուրդները՝ մեկ ներկայացուցիչ գյուղական խորհրդի յուրաքանչյուր 50 անդամից, Քութայիսին և Փոթիին կցված վայրերի գյուղական խորհուրդները՝ մեկ ներկայացուցիչ գյուղական խորհրդի յուրաքանչյուր 20 անդամից, Թիֆլիսին կցված վայրերի գյուղական խորհուրդները, բացի այդ, ընտրում են իրենց պլենումում ներկայացուցիչներ (պատգամավորներ) Թիֆլիսի մերձքաղաքային շրջանային խորհրդի համար համաձայն հետևյալ հաշվի՝ մեկ պատգամավոր գյուղական խորհրդի յուրաքանչյուր 10 անդամից։ Այն դեպքում, յերբ գյուղական խորհրդի անդամների թիվը պակաս ե ներկա հոդվածով սահմանված նորմայից, գյուղական խորհուրդը ընտրում ե մեկ պատգամավոր։

91. Խորհուրդների շրջանային համագումարը կազմվում ե՝ ա) շրջանի հողամասում գտնվող բոլոր գյուղական խորհուրդների ներկայացուցիչներից հետևյալ հաշվով՝ մի պատվիրակ 300 բնակչից, բ) շրջանի մեջ մտնող քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներից, հաշվելով 120 ընտրողից մի պատվիրակ, գ) գյուղական վայրերում կամ գյուղական խորհուրդներ ունեցող քաղաքներում գտնվող գործարանների ներկայացուցիչներից և խորհտնտեսությունների ներկայացուցիչներից, հաշվելով 60 ընտրողին մի պատգամավոր։

Խորհուրդների շրջանային համագումարի պատվիրակները ընտրվում են՝ քաղաքային և գյուղական խորհուրդներից այդ խորհուրդների պլենումում, իսկ ներկա հոդվածի «գ» կետում հիշված գործարաններից և խորհտնտեսություններից՝ ընտրական ժողովներում։



92. Խորհուրդների Համավրաստանյան Համագումարը կազմվում ե Աբխազիայի Ավտոնոմ ԽՍՀ, Աջարիստանի Ավտոնոմ ԽՍՀ, Հարավ-Ոսեթիայի Ավտ. Մարզի խորհուրդների համագումարների և խորհուրդների շրջանային համագումարների ներկայացուցիչներից, հաշվելով բնակչության յուրաքանչյուր 10.000 հոգուց մի պատվիրակ այն բնակելի վայրերից, վորոնք խորհուրդներն ընտրում են բնակչության թվի հաշվով, և յուրաքանչյուր 2000 ընտրողից մի պատվիրակ այն բնակելի վայրերից, վորոնք խորհուրդներն ընտրում են ընտրողների թվի հաշվով, ինչպես նաև Թիֆլիս, Քութայիս և Փոթի քաղաքների խորհուրդների յուրաքանչյուր 2000 ընտրողի մի պատվիրակ քաղաքի ազգաբնակչությունից և քաղաքներին կցված գյուղական վայրերի 10.000 բնակչից՝ մի պատվիրակ։

93. Աբխազիայի Ավտոնոմ ԽՍՀ, Աջարիստանի Ավտոնոմ ԽՍՀ և Հարավ-Ոսեթիայի Ավտ. Մարզի խորհուրդների համագումարները, խորհուրդների շրջանային համագումարները և Թիֆլիսի, Քութայիսի ու Փոթիի քաղաքային համագումարները խորհուրդների Համավրաստանյան Համագումարի համար պատվիրակներ ընտրելու հետ միաժամանակ, պատվիրակներ են ընտրում խորհուրդների Անդրկովկասյան Համագումարի համար հետևյալ հաշվով. Աբխազիայի Ավտոն. ԽՍՀ, Աջարիստանի Ավտոն. ԽՍՀ և Հարավ-Ոսեթիայի Ավտ. Մարզի խորհուրդների համագումարները և խորհուրդների շրջանային համագումարները տալիս են բնակչության 15.000 հոգուց մի պատվիրակ այն բնակելի վայրերից, վորոնք տալիս են մի պատվիրակ ըստ ազգաբնակչության քանակի և մեկ պատվիրակ 3000 ընտրողներից՝ այն բնակելի վայրերից, վորոնք խորհուրդներ են ընտրում ըստ ընտրողների քանակի, իսկ Թիֆլիսի, Քութայիսի և Փոթիի քաղաքային խորհուրդները տալիս են մեկ պատվիրակ 3000 քաղաքաբնակ ընտրողներից և մեկ պատվիրակ քաղաքին կցված գյուղական վայրերի յուրաքանչյուր 15000 բնակչից։

94. Խորհուրդների և խորհուրդների համագումարների ընտրությունների ճշտությունն ստուգելու համար, ինչպես նաև պատգամավորների լիազորություններն ստուգելու համար ամեն մի խորհուրդ և խորհուրդների համագումար ընտրում ե մանդատային հանձնաժողով։

Մանդատային հանձնաժողովը ստուգման արդյունքների մասին զեկուցում ե համապատասխան խորհրդի և խորհուրդների համագումարներին, վորոնք վորոշումներ են հանում կատարված ընտրությունների ճշտության և պատգամավորների իրավասության մասին։

Ծանոթ. — Խորհրդի նախագահության և գործադիր կոմիտեյի նախկին կազմի այն անդամները, վորոնք խորհուրդների կամ խորհուրդների համագումարների անդամներ չեն հանդիսանում, ոգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

95. Խորհուրդները և խորհուրդների համագումարներն իրենց նախագահությունների և գործադիր կոմիտեների կազմի մեջ, ինչպես նաև վերադաս համագումարների համար իրենց կողմից կարող են ներկայացուցիչներ ընտրել վոչ միայն այդ խորհուրդների և համագումարների անդամներին, այլև ընդհանրապես այն բոլոր քաղաքացիներին, վորոնք ոգտվում են ընտրական իրավունքներից, անկախ նրանց բնակության կամ աշխատանքի վայրից:

96. Խորհուրդների համագումարի աշխատանքներն սկսելուց հետո, իշխանության գործադիր մարմնի դերում մնում է ելի նախկին կազմի համապատասխան գործկոմը, վորի իրավասությունը դադարում է այն ժամանակ, յերբ նիստի յե հրավիրվում գործադիր կոմիտեյի նոր կազմը:

97. Խորհրդի և գործադիր կոմիտեյի նոր նախագահությունն ընտրելուց հետո հրավիրվում է կազմակերպչական նիստ գործկոմի հին կազմի հետ միասին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Խորհրդի և գործադիր կոմիտեյի նախագահության նոր կազմի մեջ չընտրված հին անդամները և բաժինների վարիչներն այդ նիստում ոգտվում են խորհրդակցական ձայնով:

Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահ՝ Ֆ. ՄԱԽԱՐԱՁԵ

Համավրաստանյան Կենտրոնական Գործադիր կոմիտեյի
քարտուղար՝ Տ. ԺՂԵՆՏԻ

1934 թ. հոկտեմբերի 5
Թիֆլիս

1071
ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0200612